



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԸ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԻԱԳԻՐ

ԶԱՐԾԱՅԵՐ ԲԱՀԱՆԱՑ ԿԵԶԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 31

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 Ֆրանկ
Զեռէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեչիքաւ, Հայոց եկեղեցի

درسمادته بشکطاشده ارمنى کلیساسنده (داجار) غزتهسى مدیرى پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

Զարմաթըրլար, Ցակորեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյաղճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.—Տ. Ռուբէն Բնյ. Գաբրիէան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Գաբրիէան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բարդէն Եպսկ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն Բնյ. Սարգիսեան
ԵԴԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻՒԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապար Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ. Սաւաթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապար Տ. Շահէ Վրդ. Դաւաթեան
ՄԱՆՁԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան

ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԸՔԵՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Եպսկ. Մալլաճեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս. Եպսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՐ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրշնիկեան
ՌՈՏՏՈՒՐ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Ա. Բնյ. Թագմճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապալեան
ՍԵՐԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէզեան
ՏԷՏԷ.—ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօփլէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձապուր Բնյ. Բիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷԶՆՕ.—Յակոբ էֆ. Նշանեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻՒ 31

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ.—Պարտէզ, խաչ, գերեզման, սո՛րէն Վ. ԳԱԼԷՄԵԱՆ.—Քահանային պարտա-
կանութիւնը, ՊՍԱԿ Վ. ԽՈՐԷՆԵԱՆ.—Արդարութիւնը, (Թարգմ.), ԼՈՒԻՋ ԱՃԷՄԵԱՆ.—Առանց քեզի,
(Քերթուած), ԼՈՒՍՆԹԱԳ.—Հայկական եւ եզրկատական տօմարներու նոյնութիւնը, ՏՔԴ. Ն. ՏԱՂԱ-
ԽԱՐԵԱՆ.—Ժամանակի պահանջը, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶ. ՍԱՐԳԻՍԵԱՆ.—Պատմ. Հայ Զայնագրութեան, (Վերջ),
ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ.—Եկեղց. Բարեկարկութիւնը.—Ս. Հայրապետին կարծիքը, ԽՄԲ.—Ա.Զ.-
ԴԱՅԻՆ ԿՅԱՆ-ՔԸ, Շարժուան լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՊԱՐՏԷՋ, ԽԱՉ, ԳԵՐԵԶՄԱՆ

«Եւ եր ի օնդոջն յորում խաչեցաւ, պար-
տէզ, եւ ի պարտեզի անդ, գերեզման մոտ...»

(Յովս. ԺԴ. 41)

Պաղեստինի ամբողջ չրջակայքին մէջ
Յիսուսի անցուցած կեանքն եւ ընդհանուր
գործունէութիւնը Աստուածային խորհրդա-
ւորութեան մը դրոշմը կը կրէ: Այդ խոր-
հրդաւորութիւնը անհասանելի եւ անթա-
փանցելի էր՝ ոչ միայն արդէի այլ նաեւ Յի-
սուսի ժամանակակից մտաւորականութեան
համար:

Յիսուսի յառաջագունէ ընդունած Աստ-
ուածային կարողութիւնները դեռ չյայտ-
նած աշխարհի, արդէն ընդհանուր ուշա-
դրութեան առարկայ դարձած էր: Հոս դը-
պիւրներն ու փարիսեցիները կը զմայլին իր
տարիքին անհամապատասխան գերմարդ-
կային կարողութիւններուն վրայ, եւ նա-

խանձոտ որտի արտաբերումը կողոյ սա խօս-
քերը կը փոխանակեն իրարու. «Ո՛չ սա էր
որդի հիւսանն:» Հոն քահանայապետին ծա-
ռաներն ունկնդրելով անոր բարոյական
կեանքի բարձրացման համար արտասանած
առակալից խօսքերը, խանդավառ գոհու-
նակութեամբ մը ելեքտրականացած, սա-
պէս կը պատասխանեն իրենց պետին. «Ո՛չ
այնպէս խօսեցաւ մարդ, որպէս այրն այն»: Այստեղ
սկեպտիկ եւ մեղուկներ քամող
Սենեարիոնականներ, որոնք մարգարէներէ
սերած ըլլալին պարծանք կը համարէին
իրենց, Յիսուսի կեանքին եւ հրաշալի գոր-
ծունէութեան խորհրդաւորութեան առջեւ
կարկամած՝ սա վճիռը կ'արձակեն. «Առաւ
առն միում մեռանել ի վերայ ժողովրդ-
եան քան...»: Այնտեղ ուղտեր կ'ողոյ հըր-
եայ կրօնամոլներ չհանդուրժելով այդ խոր-
հրդաւոր մարդուն իրենց հանդէպ ցոյց
տուած խստասրտութեան, անմիջական մա-
հացումի մը կ'ուզեն ենթարկել զայն. սա-
կայն միւս կողմէ իրենց զարմանախառն

հետաքրքրութեան լիովին գոհացում տալու համար անձկանօք կը հարցնեն իրեն. «Մինչև յերբ թափես զոգիս մեր, եթէ դու ես Բրիստոն, առա՛ մեզ համարձակ»:

Յիսուսի կեանքին և գործունէութեան այդ դարմանահրաշ խորհրդաւորութենէն սոսկում կը զգայ նոյն իսկ Պիղատոս, և շուարած ու չլմորած՝ կ'ըսէ Հրէից. «Առէ՛ք զնա դուք և ըստ ձեր օրինացն դատեցաւ ըսէ՛ք, ես և ոչ մի ինչ պատճառս դատենմ ի նմա»:

Այս խորհրդաւորութեան աստուածայնութիւնը և Յիսուսի երկնային ծագումը աւելի կը յայտնուի Գողգոթայի վրայ, ուր հանին զնա ի խաչ, աւելի ևս կը շեշտուի երբ հարկւրապետը կը գոչէ. «Արդարեւ այրս այս արդար էր», և առաւել ևս կը բացորոշուի թաղումովը պարսեզի մը մէջ. «Եւ էր ի տեղւոյն, յորում խաչեցաւ պարտէզ, և ի պարտիզի անդ գերեզման նոր»:

Պարսեզ, խաչ, գերեզման. ահա երեք բառեր, որոնք Բրիստոսի կեանքին և գործունէութեան վերջնական ու բացորոշ խորհրդանիշերն ըլլալէ զատ, կը ներկայացնեն նաև մարդկային կեանքին երեք գլխաւոր երեւոյթները:

Պարսեզ.— Պարսեզը կեանքին տառջին տարիներուն անոյց ու անմեղ յիշատակը կը վերարծարծէ մեր մէջ: «Երիտասարդութիւնը, կ'ըսէ Ս. Օգոստինոս, մեր օրերուն վարդն է»:

Նախահօր և նախամօր՝ Աղամի և Եւսիյի նման՝ պարտէզի մը մէջ տեղի կ'ունենայ մեր գոյութեան սկզբնաւորութիւնը, հոն է որ կը ծագի կեանքին վարդ արշալոյսը, և իր քաղցրածաւալ ցօղով կը ցօղաւորէ ամբողջ բնութիւնը, որ հրաշալի խորհրդաւորութիւններ կը ծրարէ իր մէջ: Ո՞րքան հաճելի է երբ մարդ գարնան գեղեցիկ առաւօտուն պարտէզ կը մտնէ, հոն ջինջ օդ կը ծծէ լիաթոք, առաւօտեան ցօղերով բեռնաւորուած ծաղիկներուն բոյրը կը շնչէ, ըստ կամս կը շրջագայի, և պահ մը բոլորովին աղատ առօրեայ հոգերէն՝ կ'ունկընդրէ թռչնոց մեղանոյզ դեղձեղանքները: Գարնան այդ գեղեցիկ առաւօտը երիտասարդական կեանքը կը խորհրդանշէ: Մե-

րութեան մէջ երբեմն մեր զգացած ուրախութիւններն ոչ այլ ինչ են, եթէ ոչ այդ երջանիկ տարիքին առաջին տպաւորութիւններուն շարունակութիւնը: Այդ երջանիկ տարիքը առողջութեան տարիքն է, ուր կը բացակային վիշտն ու լացը, ողբն ու կոծը, հոգն ու սուգը: Յոյսը կը ծիծաղի մեզի, բնութիւնն ամբողջ կը ժպտի մեր երեսին, և մեր երիտասարդական վառ երեւակայութիւնը ամէն ինչ փայլուն գոյներով կը նկարէ մեր աչքին:

Այո՛, երիտասարդութիւնը պարսեզ մըն է, ուր բազմաթիւ վարդի կոկոններ կը ծլին ու կը ծաղկին, իբրեւ խորհրդանիշ յոյսին և լոյսին: Ի՞նչ փոյթ եթէ վարդերն ու ծաղիկները տերեւաթափին ու թարչամին, երբ մենք գինովցած ենք այլ եւս անոնց թոյրէն ու բոյրէն... Եւ սակայն ո՞վ չի յիշեր ու չուզեր վերապրիլ այդ անդառնալիքէն անհետացած երջանիկ օրերը: Աւա՛ղ, սակայն «բոցավառ սրով շրջափակեալ» քերովրէ մը յաւէտ կ'արգիլէ մեզի այդ պարտէզին մուտքը: Մեր նախածնողաց պէս, առանց կանխազգուշութեան պատուիրանադանցաբար արգիլուած պըտուղը ճաշակեցինք հոն, և այդ երբեմնի ծառազարդ ու ծաղկազարդ պարտէզը հիանալի, չոր ու ցամաք անուպատ դարձած է: Մենք՝ սակայն՝ իբրեւ հաւատաւոր Բրիստոնիաներ, այն յուսով պէտք է տագորուած ըլլանք, թէ այդ անապատը պիտի վերածաղկի վարդի մը պէս և պիտի վերստանայ իր նախկին փառքն ու գեղը:

Խաչը.— Երիտասարդութենէն վերջը կեանքը տարբեր երեւոյթ մը մը կը ստանայ: Այդ երեւոյթներուն մէջ մենք չենք տեսներ այլ ևս ո՛չ զուարճութիւն և ո՛չ հաճոյք, այլ պայքար. անխառն երջանկութիւնը դառն վիշտերու և տառապանքի կը փոխուի հոն: Այն ամպերը, զորս մեր երիտասարդական երեւակայութիւնը ակնախաթիվ ճաճանչներով երփնաւորած էր, մութ ու տեղայն գոյն մը կը ստանան. կանաչագեղ ծառերը հետզհետէ կը տերեւաթափին, և իրենց ճիւղերուն մէջէն երկնքի կապոյտին վրայ կողմնակարուած կը տեսնենք խաչ մը, զոր տերեւները անտե-

սանկի ըրած էին մեր աչքերէն: Այդ խաչին տեսքը սոսկումով և յուսահատութեամբ կը լեցնէ մեր սիրտը, և կը թառամեցնէ յոյսի ծաղիկը գեղեցիկ: Այդ սարսուռներով վարակուած՝ հոր իրական աշխարհին մէջ կը մտնենք, մեր ամբողջ երազներուն անհետ կորսուելը կը զգանք, երջանկութենէ դժբախտութեան, առաւօտեան զով սիւքէն միջօրէի կիզիչ ջերմութեան, և անոյշ յոյսերէ անյուսութեան կ'անցնինք:

Մենք չենք կրնար դէպ յառաջ քայլ մ'առնել՝ առանց ճամբուն մէջ մեր ոտքերը վիրաւորելու և մեր ետին արիւնի բիծեր թողու: Կեանքին հետ լծորդուած ճակատագրական խաչով մը կ'առնենք մեր ճամբան. իսկապէս անոր ծանրութիւնը կը ճնշէ մեր վրայ, բայց Բրիտտոսի նման մենք ալ պէտք է մեր ուսերովը կրենք այդ փայտը և գամուինք անոր վրայ: Ինչո՞ւ համար սակայն այդքան լաց, արցունք և վիշտ, ո՞վ է պատճառը: Բնականաբար մեղքը:

Առանց մեղքի, երկիրը Աստուածային պարտէզ մը, Ս. Գրոց մէջ նկարուած դժբախտ մը պիտի ըլլար: Տանջանքը, վիշտն ու արցունքը մեր ճակատադիրը պիտի ըլլան անխուսափելիօրէն, ցորչափ մեղքը գոյութիւն ունենայ աշխարհի վրայ և ցորչափ պղծ է ու պղտորէ մեր սիրտը:

Գերեզման. — Գերեզման, ահա կեանքին վերջին սարսաղագեցիկ երևոյթը: Պէտք է գիտնանք սակայն թէ այդ խորհրդանիշ գերեզմանը անտեսանելի է մեզի համար: Պարտէզին մէկ անկիւնն է այն, խիտ ծառերուն մանր ու հաստ տերեւներով ագուցուած միջին մէկ խորշը ծածկուած:

Իր գարնանային չքեղութենէն մերկացած պարտէզին, այսինքն մեր ոչ-երիտասարդական կեանքի տեականութեան մէջ արցունքներն ուրախութեան շատ մօտիկ կ'ընթանան: Այդ պարտէզին մէջ խաչ մը և գերեզման մը կը գտնուի, պարտէզը խաչին կը պատրաստէ զմեզ և խաչը գերեզմանին: Ինչ յոյսեր, ինչ ուրախութիւններ, ապագայ երջանկութեան ինչ երազներ թաղած ենք արդեօք այդ գե-

րեզմանին մէջ: Ո՞րքան սիրելիներ, մայր ըլլան անոնք թէ հայր, եղբայր ըլլան թէ քոյր, բարեկամ ըլլան թէ ընկեր, թաղուած ու անհետացած են այդ գերեզմանին լուռ ու սարսուռ աղբող մթութեան մէջ: Ո՞րքան տխուր է մտածել թէ մեր կեանքն ալ անոնց կեանքին պէս մթութիւններու և լուռ խորհրդաւորութիւններու մէջ պիտի վերջաւորի:


Եզրպտացիք ըստ սովորութեան իրենց խնջոյքի սրահներուն մէջ մարդու կմախք մը կը դնէին, իբրեւ նախագահ իրենց կերութեամբներու սեղանին: Այդ կմախքը կը յիշեցնէր իրենց՝ Եպիկուրեաններու սա առածը. «Ուտենք և խմենք, վասնզի վաղը պիտի մեռնինք»:

Եթէ մենք ալ մեր աչքին առջև պատկերացնենք յաճախ կեանքին այդ երեք խորհրդանիշերը, այսինքն պարտէզը, խաչը, և գերեզմանը, այն ատեն պիտի կրնանք ըմբռնել կեանքը իր բոլոր եղանակաւորումներուն մէջ, և իսկապէս ապահովել մեր փրկութիւնն ու երջանկութիւնը: Այո՛, առանց պարտէզի չկայ խաչ, և առանց խաչի չկայ գերեզման, և հետեւաբար լուսապսակ յաւիտենական երջանկութեան: Երբ կարենաք այդ երջանկութեան հասնիլ, երբ կեանքի այդ երեք երևոյթ խորհրդանիշերուն մէջ կարենանք լրջօրէն և շրջակայեցութեամբ ապրիլ, այն ատեն եթէ մեռած ըլլանք իսկ, գարնանային ծաղիկներուն նման պիտի վերապրինք յարուցեալ Փրկչին փառքերովը պծնուած:

Յանձնենք, ուրեմն ինքզինքնիս Յարուցելոյն, և անիկա մեր երիտասարդական պարտէզ կեանքէն սկսեալ պիտի զօրացնէ զմեզ, տանելու համար մեր խաչը իր ետեւէն, պիտի առաջնորդէ զմեզ գերեզմանի մթութիւններուն մէջէն հո՛ն, ուր ո՛չ վիշտ կայ, ո՛չ սուգ, ո՛չ ողբ և ո՛չ ալ արցունք:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

Սկիզբաւ.



ՔԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է քահանային պարտականութիւնը: Անհրաժեշտ է որոշակի ճշտել ասիկա, այնպիսի ատեն մը, երբ իբրեւ սկզբնաւորութիւն եկեղ. բարենորոգմանց, ստիպողաբար կը խորհուի կրօնականութեան բարձրացման վրայ: Այդ հարցումին կը պատասխանէ Գրիի առաջնորդ Արմաշական Գեր. Տ. Պատկ. Վ. Խորէնեան՝ Աստուծոյ զիւլի նորընծայ Տ. Բաղնարաս ք. ի ուղղուած գեղեցիկ խրատական-քարոզով մը, որ յատկապէս «Տաճար»ի համար ամփոփ ձեւով զրի առնուած է եւ զոր հաճոյքով կը հրատարակենք. —

Սիրելի՛ նորընծայ պաշտօնակի՛ցս, քեզի կ'ուզուի սրտաբուրդիս խօսքերս, որոնք առաջնորդ պիտի ընտրես քու ընդարձակ ասպարէզիդ բարդ ճամբաներուն մէջ եւ զգուշութեամբ պիտի ընթանաս իւրաքանչիւր քալափոխիդ: Երէկ դուն ալ իբրեւ աշխարհական անհատ մը ժողովուրդին մէջտեղը կեցած էիր, այսօր կը գտնուիս Աստուծոյ սեղանին առջեւ, սրբազան պարտականութեանց բեռը վիզդ փաթթած: Երէկ պարզ հաւատացեալ մը, միայն անձնական ու ընտանեկան հոգերովդ կը ղրաղէիր, այսօր ամբողջ համայնքի մը հայրը կ'ըլլաս, եւ միջնորդը Աստուծոյ ու ժողովուրդիդ միջեւ. ժողովուրդ մը, որ տարիներէ ի վեր զրկուած էր այս շնորհքէն, ընտրեց զքեզ, իսկ եկեղեցին նուիրագործեց:

Քահանայական պաշտօնը այնքան բարձր է, որքան չէ տրուած հասարակ մտքերու զայն ըմբռնել. նոյն իսկ չեն ըմբռնած հիմակուան պաշտօնակիցներէդ շատեր, սակայն յետ այսու ամենագլխաւոր պարտականութիւն մը պիտի ըլլայ ուսումնասիրել, գիտակցիլ ու ստանձնել. ձեր պաշտօնին նուիրականութիւնը այնքան բարձր է, որքան չէ եպիսկոպոսներ՝ իր անսահման փառաւորութեանը, վարդապետին՝ իր անաղարտ շնորհափայտութեանը, եւ առաջնորդին՝ իր պաշտօնի եւանդուն գործունէութեան մէջ: Մի կարծէք թէ ձեր պաշտօնը կը կայանայ միայն թաղում ընելու, պատկերելու, մկրտութեան խորհուրդը կատարելու, տուն օրհնելու ձեւակերպութեանց

մէջ: Եթէ այսքան բլար, ոչինչ պիտի արժէին ձեր ուխտն ու խոստումները, իսկ ժողովուրդին յոյսերն ու ջանքերը ի դուր պիտի վաճառէին: Կրօնական ձէսերն ու արարողութիւնները արտաքին կրեւոյթներ են, լոկ հաւատքի մը արտայայտութիւնները. կրնանք լսել թէ՛ վարժ տիրացու մը կրնայ կատարել, կամ ժողովուրդը ինքն իր ձեռքով ընել յիշեալ խորհուրդներն ու յարակից գործողութիւնները, դուն պէտք է քու սրտովդ, երկնածիր շնորհացդ լոյսովդ, օրհնես ժողովուրդդ ու կապիս մէկ հոգիով մը. դուն ժողովուրդիդ առաջնորդը պիտի ըլլաս, անոր յարացոյցը, ամէն տեղ բարի օրինակ մը պիտի տաս, բարութեան ու սրբութեան արկար մը պիտի հանդիսանաս. դուն ժողովուրդիդ հողին կը կաղմես եւ անոր զգացումներուն թարգմանը, դուն ժողովուրդին մէջ պիտի բնակիս եւ փոխադարձաբար. կանոնաւորապէս ամենայն գիտակցութեամբ պիտի ջանաս մաքուր ու պայծառ պահել եկեղեցին, որ վերստին ծնաւ ճգնի մկրտութեամբ Հոգւոյն Սրբոյ. հարկ եղած անձնութիւններն ու զոհողութիւնը չպիտի խնայես աղգային կարեւոր հաստատութեանց համար, եւ անոնց յառաջացման աշաւը ջուրով համար պիտի հետեւիս, պիտի ջանաս դպրոցը բարձր դիրքի մը վրայ պահել յաճախ պիտի այցելիս եւ քահանայի խրատներովդ կրթիս աշակերտաց մատաղ մտքերը, եւ Տէրը յաշողութեամբ պիտի պատկէ աշխատութիւններդ:

Բացարձակապէս յայտնի է թէ՛ երբ նոյն իսկ ամէնէն անճաշակ օտարականը գիւղը մտնելու պատենութիւնը ունենայ, իբրեւ քրիստոնեայ, եկեղեցիին դռնէն ներս կը մտնէ, ուշի ուշով կը դիպէ այն չէնքն եւ կարգի ու սարքը, ուր կեցած է աղօթելու: Իր անկէ կրած տպաւորութիւնները քահանային աստիճանաշարը կը ցուցնեն. պիտի գննէ անոր նիստն ու կացը, հագուստներն ու չարժուածքը. պիտի հետաքրքրուի քանի մը խօսք ընելու անոր հետ, որոնցմով պիտի կրնայ գաղափար կազմել գիւղացիներու նկարագրին վրայ, իրենց միակ ներկայացուցիչին միջոցաւ:

Քեզի չի վայրեր որ ըլլաւ արծաթասէր, մի գուցէ թերանաւ պարտականութեանց մէջ և արատաւորեալ պաշտօնդ. դուն չպիտի ըլլաւ երբէք արրեցող ու խնայ, և ընդհակառակը, ասոնց վնասակարութիւնն ու քայքայիչ ազդեցութիւնը չարունակ պիտի քարոզեալ ժողովուրդիդ, և միշտ անձիւ օրինակովը. առանց ասոր ոչինչ պիտի արժէ խօսքդ ու յորդորդ. ժողովուրդը՝ բնական կապով մը կապուած է իր Առաջնորդին, և տրամադիր անոր խօսածները մտիկ ընելու ու գործողութիւնները քնննողի աչքով դիտելու. սակայն գիացիր թէ՛ չարին սերմերը՝ ամէնէն աւելի կ'աճին ու կը բեղմնաւորին, գէշ օրինակը վայրկեանապէս կը դրոշմուի անոր սրտին ու մտքին մէջ. դուն ճիշդ թափելու ես, բարութեան սերմերը ուսմանցնելու և զեղեցիկ օրինակներ տպաւորելու անոր հոգիի խորը. դրամական հաշիւներու համար վէճեր մի յարուցաներ զիւղացիներու հետ, որոնք արժանապատուութիւնդ կը վիրաւորեն, չըլլայ թէ սպառնում մը ունենաւ տէրունական մեծ-ածներու դրամ հաւաքելու տուն օրնելով, կամ Մնունդէն կտքը՝ Զատիկին չսպասեալ ապառիկներդ գանձելու համար:

Իրրեւ հոգեւոր հայր, պիտի մխիթարեալ ժողովուրդդ. առ հասարակ. աղքատին ու որբին պաշտպան, այրիներուն ու զրկեալներուն նեցուկ պէտք է ըլլաս. միայն հարուստներուն տուները չպիտի այցելես, այլ նաեւ աղքատներուն և անկարողներուն ու զանոնք ուրախացնես, քարոզես Աստուծոյ խօսքը ամէն տեղ և բեզուն գետին պատրաստեալ զանոնք հիմնաւորելու համար: Յիշէ թէ՛ իրրեւ Եկեղեցիի պաշտօնեայ՝ զինուորուած ես ճշմարտութիւնը պաշտպանելու, արդարութիւնը գործադրելու. որովհետեւ ասոնք են միակ միջոց պաշտօնդ արժանաւորապէս վաղկեցնելու: Յանուն ճշմարտութեան պիտի մոռնաս հաշիւներդ, շահերդ և ամէն ինչ, նոյն իսկ անձը. բնաւ չպիտի խաբես ժողովուրդդ անձանօթէն կամ օտարազգին, յամենայն դէպս իրաւունքը պիտի խօսիս ու իրաւգործես:

Իրրեւ նախագահը գիւղիդ թագ. Խոր-

Խորհրդոյ, Հոգաբարձութեան և այլ ժողովներու, իրաւանց ու ճշմարտութեան ուղիովը պիտի առաջնորդես զանոնք, ու վարես գիւղական բոլոր գործերը: Ի հարկէ իրարու հետ դատ ունեցողներէ մին անիւրաւ է ու պիտի ցաւի քեզմէ, սակայն խիղճդ հանդարտ է երբ իրաւունքը պաշտպանած ես. ես չպիտի գովէի զքեզ՝ եթէ ժողովուրդդ ամբողջ գոհ ըլլային քեմէ, և ընդհակառակը, նոյնպէս կ'իյնէ միայն փոքրամասնութիւն մը գոհ ըլլար, որով այն ատեն ասոնց ինպաստ գործած կ'ըլլայիր: Ես առ ոչինչ պիտի համարէի դարձեալ այն դժգոհութիւնները, որոնք կը յարուցուին ժողովրդեան մէկ մասին կողմէ, իբր արդիւնք սղիտութեան և անհասկացողութեան, որ հետզհետէ գիտակցութեամբ կը ջնջուի. պիտի աշխատիս ժողովուրդիդ բարօրութեանը համար, և պիտի բնակեցնես զիրենք. «Ի վայրի դալարւոյ և առ ջուրս հանգստեան»:

Դուն ժողովուրդիդ հոգեւոր բժիշկն ես. պիտի սորվեցնես ընթերցասէր ըլլալ, գիրքեր կարդալ ու հասկնալ. և այդ մեծ ոյժ մը կ'ըլլայ մօլութեանց դէմ պայքարելու:

Այս ամէնը կը խօսիմ քեզի, բոլոր առաքեալներուն և Յիսուսի աշակերտներուն անունով, մարգարէներուն ու քարոզիչներուն բերանով, որոնք իրենց արիւնովը ներկեցին Եկեղեցիին հիմնաքարերը. կը խօսիմ Պետրոս առաքեալին անունով, որ ի սկզբան այնքան ջերմեանդ հաւատացեալ, երիցս ուրացաւ ու նշովեց իր Տէրը և դարձեալ զղջաց, իր ուղղութիւնը չկորսնցուց, ամէն տառապանք յանձն առաւ, և իր աշխատութիւնները հաստատուն գետնի մը վրայ զետեղեց ու արժեցուց. Ստեփանոս նախասարկաւագին անունով, որ իրրեւ ճշմարտութեան պաշտօնեայ առաջինը եղաւ մարտիրոսներու շարքին մէջ. Պողոս առաքեալին անունով, որ առաջուց հրեայ անհատ մը. թէեւ ատելութեան կրակը կը դրդէր զինքը ջնջել Բյրիտոնէութիւնը, սակայն իբր անօթ ընտրութեան, Աստուածային գերահաշ լոյսէն յեղաշրջուած, կատարեց իր պաշտօնը ամենայն յաջողութեամբ:

թեամբ և արդիւնաւորութեամբ. Թաղէոս ու Բարթողիմէոս սրբազան առաքեալներու անունով, որոնք Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմերը դրին ու ճշմարտութեան լոյսը տարածեցին, Հայաստանի մէջ նահատակուեցան և իրենց արիւնովը օծեցին Եկեղեցիին սիւները. Յովհաննէս Մկրտիչի անունով, որ նախակարապետը եղաւ Աստուծոյ Բանին և իր գլուխը տուաւ ճշմարտութեան փոխարէն. վերջապէս բոլոր նահատակաց անունով, որոնք, ստուգապէս ճշմարտութեան ու արդարութեան համար մարտիրոսացան և իրենց սրբազան յիշատակներով զարդարեցին պատմութեան էջերը. Հայ Եկեղեցւոյ առաջին հայրապետին Ս. Գրիգոր Լուսաւորչին անունով, որ իր հաստատուն հաւատքովը յազմեց բռնութեան անոտի սպառնալիքներուն, և իր հզօր կամքին տակ ընկճեց հպարտ թագաւորի մը ամբողջ զօրութիւնը, հաստատեց հայրապետական անկախ աթոռ մը, որուն վրայ իր արժանաւոր սերունդը բազմեցաւ՝ աւելի բարձրացնելով դասն. իր երկու որդիքը՝ Արիստակէս ու Վրթանէս. Յուսիկ, Ներսէս, Սահակ ու Մեսրոպ. Կը մաղթեմ որ Տէրը տայ քեզ՝ Արիստակէսին կորովը, Վրթանէսին վարիչ ազդեցութիւնը, Յուսիկին նախանձախնդրութիւնը, Ներսէսին մեծավայելուչ տաղանդը, Սահակին գիտութիւնը ու Մեսրոպին ուսումնասիրութիւնը. աղօթենք որ տէրը չնորհէ քեզ, առ յաւէտ պաշտելի Խրիմեան Հայրիկի հայրենանուէր հոգին, ժողովուրդին սրտէն բխած ու անոր սիրովը տոգորուած:

Իսկ ձեզի, սիրելի՛ ժողովուրդ. Աստուծոյ գիւղի, ձեր վրայ ալ ծանրացած կան պարտականութիւններ. դուք պարտիք գիտակից հնազանդութեամբ մտիկ ընել ձեր հոգեւոր հովիւին խրատներուն ու խորհուրդներուն, ինչպէս նա Աստուծոյ առջեւ կ'ուխտէ սրտովին նուիրուիլ ու հաւատարիմ մնալ Եկեղեցիին, և արթնութեամբ հսկել ժողովուրդին վրայ. պէտք չէ մոռնալ՝ զինքը ամէն կերպով գոհացնելու, իր ապրուստն ապահովելու, պարտաճանաչ ժողովուրդի մը օրինակը տալով:

Եւ մենք ամէնքս աղօթենք Բարձրեալին, որպէս զի իր բազմատեսակ շնորհները առատապէս պարգեւէ և իր աջովը զօրացնէ անոր բազուկները, դիմադրելու համար չարին և վարելու ճշմարիտ ու քրիստոնէավայել կեանք մը:

Քղի

ՊՍՍԿ Վ. ԽՈՐԷՆԵԱՆ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Արդարութեան գաղափարին ֆական տարրը հաւասարութեան գաղափարն է: Արդար ըլլալ՝ անկողմնակալ և ամենուն հանդէպ միեւնոյն վարմունքն ունենալ կը նշանակէ: Անարդարութիւնը հաւասար է կողմնակալութեան: Արդարութեան ողին է որ կը մղէ ընտանիքի մը հայրը, որպէս զի ջանայ իր զաւակաց մէջ հաւասարապէս բաժնել իր ստացուածքը, խնամքը և և սէրը: Անիրաւութիւն է եթէ անոնցմէ մին միւսներէն աւելի սնուցուի, աւելի զգեստաւորուի և աւելի սիրուի: Արդար օրէնքը ամենուն համար ալ պէտք է հաւասարապէս գործադրուի: Կատարեալ արդարութեան սկզբունքներուն համեմատ կազմակերպեալ ընկերութեան մը մէջ, պարտականութիւնները ամենուն վրայ հաւասարապէս կը ծանրանան, և ամենը հասարակաց կեանքի շահերէն հաւասարապէս կ'օգտուին:

Ուրեմն արդարութեան գաղափարը շատ պարզ պիտի ըլլար, եթէ կարելի ըլլար բոլոր մարդիկ վերացական համարժէք միութիւններ նկատել: Բայց պէտք է ընդթեան անհաւասարութիւնները նկատի առնել: Մարդիկ բնականօրէն անհաւասար են. անհաւասար են իրենց ոյժերը, իրենց առողջութիւնը, իրենց մտային կարողութիւնք, իրենց կեանքի տեւականութիւնը. անհաւասար են նաեւ իրենց պէտքերը: Անարդար պիտի ըլլար միեւնոյն չափով հաց բաժնել անհաւասար անօթութիւն ունեցողներուն, և միեւնոյն աշխատութիւնը հարկադրել տկարին և զօրաւորին: Երբ հաւասարու-

թիւնը անհաւատար էակներու կը պատ-
շաճեցուցուի, կը դադարի արդարութիւն
ըլլալէ: Արդարութեան պահանջածը հաւնե-
ւնասական բաժանումն է: Կատարելապէս
կազմակերպուած ընկերութեան մը մէջ, ա-
ւելի անորոշակ ունեցողը աւելի շատ հաց
պիտի ուտէ: Եւ ինչպէս զայն աւելի շատ մտղը
աւելի տաք հագուստներով պիտի պաշտ-
պանուի: Տկարը և հիւանդը աւելի գուր-
գուրանք պիտի վայելեն քան ուրիշները:
Եւ քանի որ այս աշխարհի բարիքները և
մարդոց փափաքները իրարու բոլորովին
անհամեմատական են, հետեւապէս այս բա-
րիքները իւրաքանչիւրին պէտքին համե-
մատութեամբ պէտք է բաժնուին: Նոյնպէս
զօրաւորը պարտաւոր է աշխատիլ տկարէն
աւելի, աւտովը հիւանդէն աւելի: Հոգեբը
և պարտականութիւնները իւրաքանչիւրին
կարողութեանը համեմատ պիտի բաշխուին:

Իւրաքանչիւրին պահանջել իւր կարողու-
թեանը համեմատ, իւրաքանչիւրին չալ իւր
պէտքերուն համեմատ. ահա ա՛յս է արդա-
րութեան բանաձևը:

Ընկերվարականներուն համար ծանօթ է
այս բանաձևը: Ոմանք կ'առարկեն թէ այս-
պիսի արդարութիւն մը անկարելի է, որով-
հետեւ մարդոց միջոցներուն և պէտքերուն
համար որ և է չափ մը չունինք, նախնա-
կան են մեր գնահատումները և գուհիկ:
Այս առարկութիւնը անզօր է. եթէ իրա-
ւացի և զօրեղ ըլլար, ոչ միայն ընկերվա-
րութեան, այլ ամբողջ մարդկութեան բա-
րոյականին դէմ կ'ուր մը կրնար ունենալ:
Մեր բոլոր ընթացքը մեր ամեն խորհրդակ-
ցութիւններուն միջամտող այս նախնական
կշռադատումներուն վրայ հաստատուած է:
Մարդոց հետ տարիլ՝ անոնց ծառայու-
թիւնները մատուցանել և փոխադարձաբար
անոնց ծառայութիւնները խնդրել և ստա-
նալ կը նշանակէ: Ուրեմն մարդ պէտք է
ամեն վայրկեան յարգէ այն ինչ որ կարող
է ընելու, և այն ինչ որ օգտակար է իրեն:
Մեր բոլոր կարողութիւններուն և պէտքե-
րուն բազմապատկան և թուական որոշ չափ
մը ցոյց տուող Ֆիզիքական և բարոյա-
կան մարդաչափութեան մը չգոյութեան
պատճառաւ պէտք է հրաժարինք արդա-

րադատութենէ: Անշուշտ ո՛չ. կատարեալ
արդարութիւնը անմատչելի խոյսէ մըն է,
բայց մենք կրնանք անոր մօտենալ: Պար-
տականութիւնը բացարձակ լաւը իրակա-
նացնել չէ, այլ լաւագոյնը: Արդ՝ բնական
անիրաւութիւնը այնքան մեծ է, մարդ
զայն այնքան քիչ քննած եւ այնքան չա-
փազանցած է որ լաւագոյնը գտնելու եւ
կատարելու համար ոչ նուազ տաճնապնե-
րու է՝ ենթարկուինք: Գուհիկ կշռադատու-
մով դիւրութեամբ կրնանք գտնել շատ մը
աշխատութիւններ, բայց չենք կրնար բնաւ
իրականացնել զանոնք:

Ահա երկու մարդ, մին ուժեղ և միւսը
տկար: Թուապէս անհասար է մէկուն ոյժը
և միւսին տկարութիւնը բացատրել: Բայց
ասիկա պատճառ մ'է ըսելու համար առա-
ջինին թէ «դու պիտի աշխատիս քու հացդ
ճարելու» և երկրորդին թէ «հանգիստ ըրէ,
ահա քու մոռնողդ»:

Առարկութիւնը ճիշդ պիտի ըլլար, և
եթէ ոչ ընկերվարութեան, գէթ քանի մը
ընկերվարականներու ըսի ըսաններուն դէմ
կշիւ պիտի ունենար, եթէ բնական ըլլա՞ր
ըսել թէ վտանգաւոր է անկարելին իրրեւ
կարելի ներկայացնել, և մարդոց ընդունիլ
տալ այնպիսի յոյսեր, որք մարդկային կա-
րողութեան սահմանէն վեր են: Բայց ող-
ջամիտ մէկը պիտի պատասխանէր. — Մենք
գիտենք թէ մեր խոյսը անմատչելի և
անսահման յառաջդիմութեան մը, անհու-
նապէս հեռացեալ եզրն է: Բայց պէտք է
անհունապէս հեռացած խոյսը մ'ունենալ,
անսահման յառաջդիմութեամբ մը անոր
ձգտելու համար: Պէտք է կատարեալ ար-
դարութիւնը երազել, միշտ աւելի արդա-
րութիւն ի գործ դնելու համար, պէտք է
երազել լաւը, լաւագոյնին հասնելու համար:

Սկիւստ

Թարգմ. ԼՈՒԻՉ ԱՃԷՄԵԱՆ

ԱՍՐԵՒՈՐ

Տաճարի առաջին տարեջրջանը ի մօտոյ կը
վերջանայ: Այս առթիւ շնորհակալութիւն յայտնե-
լով այն Պատ. գործակալներուն որ արդէն մար-
քած են իրենց հաշիւը, կը խնդրենք առկախ հա-
շիւներ եւ առաւել կամ նուազ կարեւոր գումար-
ներ պարտք ունեցողներէ՝ անյապաղ մաքրիլ ի-
րենց հաշիւը: Կը յիշեցնենք թէ ծախքերը միշտ
կանխիկ են, եւ քաժնեգիւններն ալ կանխիկ պէտք
է ըլլան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏՕՄԱՐՆԵՐՈՒ Ն Ո Յ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տոթ. Ն. Տաղաւարեանի անցեալ տարի հրատարակած «Ուրուագիծ պատմութեան Հայոց ի սկզբանէ մինչ ց'Արշակունի հաւատարմութիւն»⁽¹⁾ հմեալից գործին մէջ կարեւոր հասցուած մը կայ հայկական եւ եգիպտական տօմարներու նոյնութեան մասին, զոր շահեկան կը համարինք ծանօթացնել մեր ընթերցողաց։

Եգիպտացիք տարին 360 օր կը հաշուէին, 30 օրուան 12 ամիսներէ բաղկացեալ, ապա սկսան 5 աւելեաց օրեր ալ ընդունիլ. սակայն զգալով թէ արեգակնային տարին $\frac{1}{4}$ օր աւելի է՝ որով 4 տարին մէկ օր եւ 1460 (365×4) տարին մէկ տարի տարբերութիւն կ'ընէ, 365 օրիցէ բաղկացեալ ֆալսալի տարիէն զատ՝ ընդունեցին եւ 365 $\frac{1}{4}$ օրուան զիսական ու կրօնական տարի մը. եւ մինչդեռ քաղաքական տարւոյ սկզբնաւորութիւնն (ամանորն) չորս տարին մի օր յառաջ կ'երթար, աստեղագիտական կրօնական տարին միշտ միեւնոյն օրը՝ Շնիկ աստղի արեգակնային ելքի օրը՝ կը սկսէր, այսինքն Օգոստ. 11ին (հ. տ.), ու 1460 տարին մի անգամ գիտական ու քաղաքական տարիներու ամանորը՝ միեւնոյն օրը կ'իյնային (Օգոստ. 11)։ Այս հանգիստում տեղի ունեցած է Քրիստոսէ 1322 տարի առաջ, յաւուրս 19րդ հարստութեան Մէնոֆրէսի, եւ հաւանականաբար անկէ առաջ 2782ին եւ 4242ին, եւ յետ Քրիստոսի 138ին, 1598ին եւ ապա տեղի պիտի ու-

նենայ 3058ին։ Այս տօմարը դեռ կը գործածեն Սպարսները։

Հայք ալ ունէին մէկ տարուան համար. 30 օրեայ 12 ամիս եւ 5 աւելեաց օրեր, ու երկու տօմար, մին հաստատուն եւ զիսական, սկսելով Օգոստոս 11ին (հ. տ.) եւ միւսը շարժական, ֆալսալի, որոց ամսագրութիւնը 1460 տարին մի անգամ հաստատուն տօմարի ամանորին կը համապատասխանէ, ճիշդ նման եգիպտականին։ Այս երկու տօմարներու ամանորից հանդիպումն տեղի ունեցաւ 20 տարի առաջ 1888ին, անկէ առաջ 428ին եւ յաջորդ հանդիպումն տեղի պիտի ունենայ 3348ին։ Եգիպտացիք այս 1460 տարուան շրջանն Շնիկ աստղի կամ Սօթիական շրջան կ'անուանէին իրենց պաշտպան Գլխաւոր աստղի անուամբ. իսկ Հայք իրենց նախահօր ձօնեալ Հայկ համաստեղութեան անուամբ Հայկայ շրջան կը կոչեն։ Հայկն Շնիկի դրացի է, եւ սա Հայկայ երեք Գլխաւոր աստղերու հետ գրեթէ միեւնոյն գծին (միջօրէականին?) վրայ կը գտնուի։


Եգիպտացիք այս տօմարի հաստատութիւնն Սիւրսի կը վերագրեն եւ Քրիստոսէ 4242 տարի առաջուրէն սկսած, որով եւ շրջանագրութիւններն կ'ըլլան 4242, 2782, 1322, 138, 1598... Իսկ Հայք իրենց նախահօր Հայկ նահապետի կը վերագրեն Քրիստոսէ 2492 տարի առաջ հաստատուած, որով եւ շրջանի գրութիւնները կ'ըլլան 2492, 1032, 428, 1888...։ Եթէ այս շրջանագրութիւնները նոյն եղած ըլլային, պիտի ընդունէինք գիւրու թեամբ մեր Եգիպտացիներէ ընդօրինակութիւնը, սակայն տարբերութիւն կը հարկադրուինք ընդունիլ միայն գրութեան հետեւողութիւնը։

Եգիպտացիք եւ Հայք իրենց ամանորը միեւնոյն օրը կը տօնէին (Օգոստ. 11/24ին) այսինքն գրեթէ մէկ ամիս առաջ աշնանային գիշերահաւասարէն՝ ինչպէս վերեւ յիշեցինք։ Գուցէ ի սկզբան կը համապատասխանէր աշնանային գիշերահաւասարին, սակայն ապա գիշերահաւասարի յառաջացումն (տարին 50 էն՝ մէկ դարու մէջ կ'ընէ մէկ օր) յառաջ եկած է այս շուրջ միամսեայ տարբերութիւնն (իբր 30 դարու մէջ)։

(1) Այս գործը Վենետիկի Ս. Ղազարու վանիէն հրատարակուած է, եւ հակառակ իր փոքր ծաւալին (136 էջ), կը պարունակի այդ նախնական շրջանի Ազգ. Պատմութեան մասին շատ կարեւոր ծանօթութիւններ՝ ըստ գիտութեան արդի վիճակին։

Գործը երեք մասերէ կը բաղկանայ, առաջին մեր քննադատի հիւն քաժանմանց, անոր քննադատութեան, ցեղի, անուան եւ լեզուին վրայ ընդհանուր տեսութիւն մ'է, երկրորդ՝ այս երկրի քննադատութեան մինչ ց'Արշակունի հաւատարմութիւն (Արտաքսաս) ֆալսալի պատմութիւնն է, իսկ երրորդն՝ այդ ժամանակամիջոցի ֆալսալիքութեան պատմութեան նախափորձն է։ Գարծի որ այս գործը ամեն Հայու մասեւադարանը գտնուի։

2300	2310	2320
2330	2331	2332
2340	2341	2342
2343	2344	2345
2346	2350	2351
2360	2361	2362
2363	2364	2365
2370	2371	2372
2380	2381	2382
2390	2391	2392
2400	2401	2402



Եգիպտացիք ամանորին Նեղոսի հնազա-
նիքը կամ յորդուժը կը տօնէին և կը սօ-
նեն։ Հայք այդ առթիւ քրհեղեղի յիշատակն
ու ջուրը կը տօնէին, ու կը սկսէին Նա-
ւասարդի խրախճանութեանց, իրարու վրայ
ջուր արակելով ու աղանի թոցնելով՝ ի յի-
շատակ Նոյի։ Ի մի բան ջուրը կը տօնէին
ինչպէս Եգիպտացիք, և զոր ցարդ Հայք
կը շարունակեն Վարդապետի ասոյին առ-
թիւ՝ որ քրիստոնէական տարազ առած է
իր տօն Այլակերպութեան։ Մեզ այնպէս
կը թուի թէ՝ երկու ազգերն ալ Զրհեղեղի
յիշատակը կը տօնեն, և իրենց այս տօնարի
սկզբնաւորութեան թուականները (Եգիպ-
տացւոց համար 4242 և Հայոց համար
2492) ըստ ազգերու Զրհեղեղի թուական-
ներն են։

Արդարեւ զարմանալի է որ իրարմէ այս-
չափ հեռի զտնուող երկու ազգերու տա-
րեգրութեանց, ամանորի ու զայն տօնելու
եղանակին մէջ այսչափ նմանութիւն գըտ-
նուի։ աւելցուր ասոր վրայ և Հայոց մէջ
Եգիպտացւոց նման կենդանապաշտութեան
հետքերը, մեռելոց թաղման եղբրամայրե-
րու ընկերակցութիւնն, ազնուականաց
բարձրութեանց վրայ թաղումը՝ որք կը յի-
շենն Եգիպտացւոց բուրգերը, և գա-
րեջրի պատրաստութեան հմտութիւնն (Բսե-
նեփն), որք կը ստիպին հաւատալ այս
երկու ազգերու քաղաքակրթութեան որ և
է առնչութեանը՝ զոր դժուար է բացատրել
մեզ։

Արդ՝ քանի որ Եգիպտացւոց մեր մայր
հայրենեաց տիրապետութիւնն չենք ընդու-
նիր, ուստի այս ամէնը բացատրելու հա-
մար կը ստիպուինք ընել հետեւեալ են-
թադրութիւնները։

Ա. Կամ Ժ. Էն Ժ. Է. դարերուն Եգիպ-
տացւոց ասիական տիրապետութեան առ-
թիւ տիրած են և Հայաստանի մի մասին,
ու թուգմէն Գ. Եգիպտացի աշխարհակալի
իշարս իր տիրած երկրաց յիշատակած
Բահեհնի երկիրը՝ Արմէնիան է (Բրագդի),
և որ ատեն Եգիպտացիք իրենց տարեգրու-
թիւնն և ալ քաղաքակրթական հետքելը
բերին ի մեզ Բրիտոսէ 7 դար առաջ։


Բ. Կամ Եգիպտական տօնարն և ալ

քաղաքակրթական հետքերը գոյութիւն
ունէին ի Սուրիո՝ որ հնթակայ էր Եգիպ-
տոսի, և անկէ անցած է ի Փոքր Ասիա և
ի Հայս։

Գ. Կամ այս եգիպտական քաղաքա-
կրթութեան հետքերը տարբեր ժամանակ-
ներ և տարբեր ճամբաներով մտած են.
զոր օրինակ զարեջրի պատրաստութիւնը,
եղբրամայրերով թաղումն և այլն, Ասո-
րեստանէն մտած կրնան ըլլալ, իսկ տօնարի
դրութիւնը քրիստոնէական թուականի Ե.
դարուն միայն՝ երբ մեր նախնիք Աղեք-
սանդրիա կ'երթային ուսանողութեան, սե-
ղացի քրիստոնեայններէն (Սպարսներէն) ու-
սան զայն. սակայն ամանորի առթիւ ջուրի
տօնը Հայոց մէջ շատ աւելի հին է, և ըստ
մեզ Զրհեղեղի յիշատակը կը ներկայացնէ,
որ հաւանականաբար Բաղդէացիներէն ան-
ցած է Եգիպտացւոց և մեզ։

ՏՐԴ. Ն. ՏՍՂԱՒԱՐԵԱՆ

Ա Ռ Ա Ն Յ Ք Ե Ղ Ի



Աստուած իմ, Քեռէ հեռու
չի կայ առաքինութիւն մը որ
հակասութիւն չըլլայ։

Սիւլիօ Բեյիֆօ

Գորովս համակ փաղաջանքով սքնգոռուած,
Աստուած ժամն սուրի մ'հ, ո'վ Աստուած.
Սերս ալ նոյնպէս կարկրոտ մը սքնփանֆի,
Առանց լեզի։

Սըրբուքիւնս պըղծութիւն մ'հ յիշաւի
Որմէ քեռես մեկը խաթուած գըրաւուի.
Ո'հ, ի՛նչ կիտֆեր սրտիս խորը կը փըրփորի
Առանց լեզի։

Արդարութիւն՝ զերս աղետի մի կերպաս
Նեխած է իսկս, որմէ նողկանք միշտ կը զգաս.
Էութիւնս համակ բոյն մ'հ հոսած Յոպոպի,
Առանց լեզի։

Անձնըւտի դիմակին չալ՝ համօրեմ,
Տէր իմ, աւա՛ղ, մակարոյթ մ'եմ անօրեմ.
Սեւ սըգրուկ մը՝ աշխարհու, փանֆի,
Առանց Բեզի։

Բարեպաշտի ցոյժ ունիմ քեռես ես,
Սակայն, քարէ՛, առնուան զով ցոյժն պէս,
Արեւուն չալ շողեմ իսկոյն կը հալի՝
Առանց Բեզի։

Բարեգործի համբաւովը փրկացած,
Ոյրնշուքիւն մըն եմ համակ սիգապանծ
Թըզեկնոյն պէս բարձրուողէ, բայց անբերրի
Առանց Բեզի:

Աղօթքս պիղծ, յիշոց մըն ե անըզգամ,
Անկ'ծք մը, Տէ՛ր, օրհնութիւններս իմ անգամ.
Երբէք չունիմ գործ մը բարի, գովելի
Առանց Բեզի
ԼՈՒՍՆԹԱՒ

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՊԱՀԱՆՋԲԸ

ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼ ԿՂԵՐՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՐԾԵԸ

Հայ Եկեղեցւոյ քահանային միմիայն
մտաւորական ու զարգացումի բարձրու-
թիւնը, և մինչև իսկ անոր նիւթականին
ապահովուած ըլլալը չին բաւեր կրօնքին
նպատակը արդիւնաւորելու համար: Ստի-
կա կատարելապէս բարձրացումը չի նշա-
նակեր անոր. ասոնց հետ միանալու են
նաեւ ընծայացունքն բարոյական նկարագրի
ազնուութիւնը, ու սրտի, հոգիի գեղեց-
կութիւնը՝ իբրեւ Աւետարանի ճշմարիտ
պաշտօնայ: Յետոյ տալու է անոր դիրքի,
ազդեցութեան բարձրացում մ'ալ, որպէս
զի անիկա ըլլայ թէ՛ Եկեղեցիին քարոզիչը,
թէ՛ գաւառի մը կամ գաւառակի մը ա-
ռաջնորդը, և այսպէս ատոմանաբար:

Ինչո՞ւ արժանաւոր քահանային չտրուի
այն ասպարէզը, ինչ որ կը տրուի կուսա-
կրօնին, որոնց մէջ շատ աւելի ապիկար-
ներ կան և երբեք յարմարութիւն չունին
իրենց պաշտօնին, ոչ մտաւորապէս, ոչ բա-
րոյապէս և ոչ ալ վարչային տեսակէտով:

Քահանայից դասը ինկած է այսօր. թէև
ընականաբար այդ ինկածութեան գլխա-
ւոր պատճառը ինք չէ, բայց դարձեալ ա-
նիկա իր անձնուիրութեամբն ու իր չար-
քաշ ծառայութեամբը աւելի մօտ ու ծա-
նօթ է ժողովուրդին, քան կուսակրօնը.
հետեւաբար անիկա ա՛լ աւելի իրաւունք
ունի միշտ բարձր. վեր միալու այն հօտէն,
որ իրմէն կ'ակնկալէ իր հոգիին ու սիրտին
մխիթարութիւնն ու սփոփանքը, իր վիշ-
տերուն ու տառապանքին մէջ յոյսն ու

քաջաւերութիւնը: Պէտք չէ սահմանափա-
կել քահանային առջև այն ասպարէզը,
ուրիշ ինք և ժողովուրդը միասին պիտի
քալեն: Ինք է որ պաշտօնին հանգաման-
քովը իբրեւ պարտականութիւն, ստիպուած
է մտնել ժողովուրդին ամեն խաւերուն
մէջ, ան շատ աղէկ կը հասկնայ իր հօտին
անցուցած կեանքն ու կենցաղը. անոր հո-
գեքանական վիճակը, տրամադրութիւն-
ները, ունեցած կամ ոչ՝ սէրն ու հաւատքը
կրօնքին հանդէպ:

Ան է որ պիտի մորճուի ժողովուրդին
ընտանեկան կեանքին մէջ, լուծելու, կար-
գադրելու անոր քաղմակնճիւ խնդիրներն
ու վէճերը. իբրեւ հաշտարար միջնորդ,
իբրեւ գուրգուրացող հայր, Աւետարանի
փրկարար խօսքերէն պատրաստուած՝ պիտի
ներշնչէ անոր ճշմարիտ կեանքի գաղափարը,
լարելու և պատրաստելու համար զայն, որ
ձգտումն ունենայ դէպի բարոյական կեան-
քը: դէպի բարձրագոյն բարին:

Անձնուէր ու պարտաճանաչ քահանան,
իբրեւ Աւետարանի պաշտօնայ, ջաւական
չի սեպեր միմիայն կիրակի օրերը քարոզ
մը տալ Եկեղեցիին բնմէն, անիկա իր կո-
չումին ու պաշտօնին ընտելեցնելով թեւա-
դրուած, իր տուած քարոզին արդիւնքը
տեսնելու համար, կը վազէ հոն ուր իր
հօտը կ'ապրի: Հոն պիտի կարենայ գա-
ղափար կազմել թէ իր քարոզը ինչ տպա-
ւորութիւն թողած է զինքը մտիկ ընող
ունկնդիրներուն վրայ: Ահա՛ այս է քա-
հանան, որուն կատարած դերը բարձր ու
վսեմ է, զոր կուսակրօնը չունի և չի կրը-
նար ալ ունենալ, այն միակ ու պարզ պատ-
ճառով որ ամուրի է: Անիկա միմիայն Եկե-
ղեցիին մէջ քարոզելով կը բաւականանայ,
ինչ որ չորս պատերէն դուրս չելլեր՝ առանց
ժողովուրդին հետ երթալու: Հարիւրաւոր
տարիներէ ի վեր Հայ ազգը այդ կարգի
քարոզներ չատ լսած է, բայց չեն արգել-
նաւորուած: Եթէ առարկուի թէ ո՞վ կ'ար-
գիլէ կամ արգիլած է քարոզիչ քահա-
նան որ քարոզելու կարողութիւնն ունի, կը
պատասխանեն թէ կուսակրօն մը գանուած
պարագային, քահանան իր փակեղին տակ
լոկ ծիսակատար մը, ինկած մուրացիկ մը կը

նկատուի. որչափ ալ քարոզելու կարողութիւնն ունենայ ան, քարոզելու պատիւն ու փառքը կուսակրօնին սեփականութիւնն է եղած հինէն ի վեր, անով է որ այս վերջինը տակաւին իր գոյութիւնը կը քաշքշէ:

Ստիպուած ենք այս դիտողութիւնը ընելու, քանի որ Եկեղեցւոյ վերանորոգութիւնն հարցը երկար ատենէ ի վեր խնդիր եղած է. պէտք է արմատական բարեփոխութիւն մը ընել, այսինքն բարձրացնել ամուսնացեալ կղերը և ջնջել կուսակրօնութիւնը: Տարբեր բան է երբ մէկը, առանց ամուսնանալու, կ'ուխտէ ծառայել Եկեղեցիին: Ըստ իս աւելորդ բնու մըն է կուսակրօնութիւնը ազգին վրայ ծանրացած. ինչ է անոր դերը հոգիները պատրաստելու գործին մէջ. իրաւ է որ մինչեւ հիմա չենք հասկցած և հասկնալիք ալ չպիտի ունենանք: Ժողովուրդին կրօնական թմրութիւնը ցնցելու համար, անոր հետ ապրող, միշտ չվիման մէջ զտնուող, անոր ապրելու կեանքէն հասկցող, գործունեայ մշակներ պէտք են, որ կարենան մշակել իրենց յանձնուած հօտին հոգիին, սիրտին ու միտքին կորդացած դաշտերը, և այդ մշակները, միայն ու միայն քահանաները կրնան ըլլալ. այս գործը կուսակրօնին գործը չէ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Գահիրէ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ռեթէոս Փափագեան, որ քահանայից սերունդէն առաջ եկած ըլլալուն համար (*) այդ մականունը առած էր, ծնած է անց-

(*) Ինքնակ Պօղոսեան վր ծնի Տ. Պետրոս քահ. որուն որդին է Տ. Խաչատուր. սորա որդին է Տ. Յովհաննէս, որմէ կը ծնի երաժիշտ Ռեթէոս. հետեւաբար քահանայի զուակ, թո՛ւ և թողնորդի եղած կ'ըլլայ Ռ. Փափագեան:

եալ դարու կիսուն՝ 1840ական թուականներուն, և աշակերտած է Մինէճի տիրացու Սիմոնի. Հայ ձայնագրութիւնը ուսած էր գլխաւորաբար Գաբրիէլ Երանեանէ, և նորա մահուընէն վերջ շարունակած էր ուրիշներէ:

Իւր ամբողջ կեանքը անցուցած է սա՛հրաժիշտ դասախօսի պաշտօնով. 1861էն սկսեալ մինչև 1890 թուականը ուսուցիչ կարգուած է Սկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ և ձկնմարանի, յորմէ հետէ Եկեղեցին այրած ըլլալով՝ ողբացեալ Աբիկ Ունճեանի (1831- 1905) պաշտպանութեամբ Գաբրիէլ Ս. Թագաւոր եկեղեցւոյն երաժիշտ կը կարգուի մինչև իր մահուան թուականը, որ է 1900 Նոյմ. 11:

Ծայրայեղ խստապահանջ էր սա եկեղ. երգեցողութեանց պարզութեան մասին. ուստի կը զգուշանար աւելորդ գեղգեղանքներ մտցնելէ նորա մէջ, և գէշ աչքով կը նայէր այդ օրէնքին դէմ մեղանշողներուն: Թերեւս այս եղած ըլլայ պատճառ՝ որ մեծ համբաւ չունեցաւ իր կենդանութեանը, թէև բաւական կոկիկ հեղինակութիւններ ունեցած է եկեղց. երգեցողութեանց մէջ, որոնց կարգապահութեան հոգածու էր:

Ռեթէոս մասնակցութիւն ունեցած է 1861ին՝ Բնարի հրատարակութեան մէջ, ինչպէս նաև անդամակցած է 1873ի երաժշտական Յանձնաժողովոյ: Իւր աշակերտաց մէջ յիշատակութեան արժանի են վաղամեռիկ Դրիգոր Գարունեան և Երմոգ Գուլումճեան, որ ցարդ կը վարէ Ս. Կարապետ Եկեղեցւոյ դպրապետութեան պաշտօնը: Հաւանական է որ եթէ յիշ մըն ալ ապրէր, ի՛նք ալ քահանայ ձեռնադրուէր, քանի որ ամուսնացած և մէկ քանի դաւակաց տէր եղած էր:

* Համբարձում Չէրչեան երեսուն տարի գաւառները պաշտօնավարելէ յետոյ, հուսկ ուրեմն վերջին կայան ընտրած էր իրեն Արմաշու Դպրեմլանքը, ուր անցուց իւր կենաց վերջին տարիները՝ դպրապետութեան պաշտօն վարելով և միաբաններէն յոջողակ աշակերտներ հասցնելով, որոնցմէ գլխաւորներն եղած են՝ Արտաւազդ վար.

Դալէքտերեան, Սերովբէ քահ. Պուրմայեան և Յակոբոս Այվազեան։ Այս վերջինը յաջորդեց Չէրչեանի՝ նորա մահուընէն յետոյ, որ տեղի ունեցաւ 1901 Յունվար 5ին։

* * Իրմէ կրկու տարի ետքը (1903) վախճանեցաւ նաև իւր ընկերակիցներէն Տ. Դարբիէլ Բահ. Խանճեան, որ վերջերս անդամակցած էր Կրօն. ժողովոյ կողմէ կազմեալ երաժշտական Քննիչ Յանձնաժողովին։

* * Ինչպէս ըսած ենք, Նիկողայոս Թաշեանի առաջնակարգ աշակերտներէն մին եղած էր Արամ Բժշկեան, որ երկար տարիներ պաշտօնավարեց Պէշիկիմաչի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ իբր երաժիշտ դասախօս, ու իւր վարպետին նման անխոնջ աշխատութեամբ նուիրեց ինքզինքը ազգային մանկտւոյն, նորանոր հեղինակութիւններով ճոխացնելով մեր մէջ Հայ ժողովրդական երգերը, ու Դաշնան դայրայիկները՝ Մանկապարտէզի տղայոց համար, որոնք մեծ ընդունելութիւն գտան՝ ժամանակիս ողբոյն համապատասխանող ըլլալուն համար։

Բարեւոք պաշտօնավարութիւն մ'ունեցաւ իր թաղին մէջ, և խաղաղիկ կեանք մը անցընելէ յետոյ միտաւ 1908ին։

* * Բարա-Մուրզայի աշակերտն և Ներսէս Շահլամիանի ընկերակիցն եղած էր նաև Լեւոն Պօղոսեան, որ ծնաւ 1883ին՝ Ռուսիոյ Ա.ք.քէրման քաղաքը. իր պատանեկութեան հասակին (1894) ուղարկուեցաւ Կովկաս, ուր Ներսէսեանի դպրանոցը մտնելով աշակերտեցաւ Մակար Եկմալեանի, որմէ ուսաւ երաժշտութեան նախնական սկզբունքը. (Ինքնակենսագրութիւն, 1910 Ամենուն տարեցոյցը). յետոյ քսնի մը տարի մասնակցեցաւ Բարա-Մուրզայի երգչական խումբին։

1898ին պետական վարժարան մտաւ, ուրիկէ մեկնեցաւ 1903ին Բարիդ՝ շարունակելու համար իւր ուսումը Ռուսական բարձրագոյն վարժարանի մէջ։ 1908ին, Թուրքիոյ Սահմանադրութեան հռչակուելէն ետքը, եկաւ Պոլիս, ուր տարիի մը չափ խումբեր կազմակերպելէ և քանի մ'աղջային երգեր հեղինակելէ յետոյ՝ իւր վա-

ղանցուկ կեանքն աւարտեց 1909 Օգոստոս 16ին հաշիւ 26 տարեկան, որով արդարացուց հասարակաց կարծիքը, որ կ'ենթադրէ թէ Ռուսահայ երաժիշտները երբեք տասարդ մեռնելու դատապարտեալ են։

* * Մեր պատմութիւնը փակելէ առաջ աւելորդ չենք համարեր յիշատակել ձայնագրագէտ նուագաժողաց անունները, որոց մէջ ամենէն նշանաւորն հանդիսացած է Խանէնտէ Նիկողոս, որ նախագէս Սուլթան Մէճիտ և ապա Սուլթան Ազիզ կայսրերու ներկայութեանը երգելու պատիւն ունեցած է. 200է աւելի կը համրուին իր զանազան եղանակներէ յօրինած Յղեր Ազսաք շարդիները, որոնք մինչև ցարդ չեն կորուսած իրենց նորութիւնը։

Իրմէ վերջը կուգայ Աչաղուրկ Սեպուհ աննման ջութակահարը, որ իր ճպոտին քաղցրութեամբը զմայլեցուցած է շատերը։ Սորա համար կը պատմեն թէ Սուլթան Ազիզ կայսրը որ մամուսուր հակում մ'ուռնէր Հիճազ եղանակին, յաճախակի նուագել կուտայ եղեր «Սիրտ իմ սաւանի» Ռուսալուայի ողբաձայն գանձը։

Ճիշդեման Գրիգոր, անուանի հանդիսացած է իւր անդուգական ձայնին արտակարգ գեղեցիկութեամբ, հրապուրելով ունկնդիր ժողովուրդը, որ գունդագունդ կը զիմէր ամենուրեք՝ սորա յանկուցիչ նախերգանքը (քաֆալ) ու քաղցրաւոր երգեցողութիւնը լսելու համար։

Գուզկունճուքիան Յարութիւն, որ քաղաքային երեկոյթներու մէջ երգիչ էր, իսկ եկեղեցւոյ մէջ դպիր՝ բառիս բովանդակ նշանակութեամբ, ձիրք մը որ խիստ հազուագիւտ ըլլալէ զատ, բաւական ճարտարութեան կը կարօտի՝ միոյն կամ միւսին մէջ չմոլորելու համար։

Մեւեալներուն մէջ յիշատակութեան արժանի են նաև Քէմանի Բրիս, Թամպուրի Յովակիմ, Բանոնի Հայկ, ևն։

Իսկ ժամանակակիցներուն դալով, մեծ անուն հանած են՝ Խանէնտէ Աստիկ, որ իր քաղմաթիւ հեղինակութիւններով և հայ ձայնագրութեան մէջ ունեցած հմտութեամբ՝ արժանաւոր աշակերտներէն մին եղած է Արիստակէս Յովհաննէսեանի։

Քէմանի Թաղէոս, որ գրեթէ ամեն զխաւոր եղանակներէ յօրինած է զանազան բիշքէփներ, սեմայիներ, շարքիներ, որոնք մեծ ընդունելութեան արժանացած են:

Ուտի Աֆէթ (Յարեթ), որ անուանի եղած է թէ՛ Եգիպտոսի և թէ՛ Պոլսոյ մէջ:

Սաղէնտէ Արշակ, որ բնական յատկութեամբ մը օժտեալ է՝ Արեւելեան նուագարանայ մեծագոյն մասը ինքնօգնութեամբ սովորելու մասին:

Աստիկզատէ Պօղոս, էպէհան Յովսէփ: Էն:

Կը վերջացնենք Հայ ճայնագրութեան պատմութիւնը, յաջորդ սերունդին թող լով՝ ժամանակակից երաժիշտներուն վրայ խօսիլ մանրամասնօրէն:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶ. ՀԻՍՍՐԷԱՆ
Վ. Ե Ր Զ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿԱՐԾԻՐԸ

Երեսուղէմէն վերադարձող նորապսակ Եպիսկոպոսներ, թերթիս անօրէն խմբագրին հետ տեսակցութեանց միջոցին յայտարարած են թէ Ն. Ս. Օծութիւն Ամինայն Հայոց Վեհ. Հայրապետը առանձին և հաւաքական տեսակցութեանց մէջ, խորհրդակցութիւններ կատարելով անոնց հոգեւորական իրաւասութեան վերաբերեալ խնդիրներու վրայ, մասնաւորապէս խօսած է եկեղեցական բարենորոգման խնդրոյն վրայ, որու մասին գրուածներուն ուշադրութեամբ կը հետեւի: Ն. Ս. Օծութիւնն յայտարարած է թէ ձիսական և արարողական բարեփոխութիւններ և յապաւումներ կարելի է ի գործ դնել համախորհուրդ, բայց այն ամէն կէտերուն որ կը վերաբերին հիմնական վարդապետութիւններու, խոհեմութիւն չէ մօտենայ գոնէ առ այժմ, և ու է փոփոխութիւն կատարել: Բարեփոխումները պէտք է կատարուին հետզհետէ, տա-

տիճանաբար, և ոչ թէ յանկարծական և յախուռն կերպով: Ն. Ս. Օծութիւնն այս ոգիով յանձնարարութիւններ ըրած է Թերքաշայ հպիսկոպոսներուն, աղբարարելով որ բարեկարգել ուղղուած ատեն մի՛ գուցէ խանգարումներ առաջ գան:

Հայրապետական աղբարարութիւնը ճիշդ ժամանակին կուգայ, չափ մը դնելու համար այն բարեկարգումներուն, եկեղեցական թէ աշխարհական, որոնք դաւանաբանական կարեւոր կէտերու միջամուխ կ'ուզեն ըլլալ, յուսալով ատով ժողովուրդը մօտեցնել Եկեղեցիին:

Տաճար, փափաքող մ'ըլլալով հանդերձ եկեղեցական բարեփոխումներու, սկիզբէն ի վեր այն կարծիքն ունեցած և կրթական խմբագրականներով յայտնած է թէ բարեկարգութիւնը պէտք է սկսի նախ եկեղեցականութենէն, որուն բարոյական և իմացական դիրքն իրեն արժանի բարձրութեան մը պէտք է հասցուի:

Կարծիքներու ազատութիւնը յարգած, և խնդրոյն լուսաբանութիւնը գիւրացուցած ըլլալու համար սիրով հիւրընկալած ենք այնպիսի գրութիւններ ևս, որոնց համակարծիք չենք գտնուած: Բայց հայրապետական աղբարարութենէն ետքն ալ, ինչպէս անկէ առաջ, հաստատ կը մնանք մեր համոզումին վրայ, թէ դաւանաբանական-վարդապետական խնդրոց մէջ փոփոխութիւններ մտցնելու ճիշդ պիտի ունենայ այնպիսի հետեւանքներ, զորս միտքէ անգամ չեն անցուցած գուցէ՝ ժողովրդեան հոգեւոր շինութիւնն յառաջ բերելու բարի նպատակով ճամբայ ելող բարեկարգիչները:

Յիշենք միշտ Եզր Կաթողիկոսին և Գրիգոր Անաւարդեցիի յուզեալ ժամանակաշրջանները:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ալգային կեանքը. բացատրութիւն մըն է այս, որ սա միջոցին կրնայ հակադրուիլ մը նկատուիլ, քանի որ կեանքը

գոյութիւն չի կրնար ունենալ, առանց պատասխանատու, խորհող Գլուխի մը: Ազգ. Վարչութեան և Ս. Պատրիարք Հօր հրաժարականները — Ազգ. Ժողովոյ անցեալ ուրբաթի նիստին մէջ կարգացուած —, կան ու կը մնան անլոյծ: Այդ նիստին մէջ, առանձին գործողութիւններէ ետքը, — որու միջոցին մէկ-երկու հրաժարականներ մերժուեցան, մէկ երկու նորոնտիւր երեսփոխանի ընտրութիւնը վաւերացուեցաւ, և Օրմանեան Ս. Ի. քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագիրը ապագրութեան տալ որոշուեցաւ —, կարգացուեցաւ Ս. Պատրիարք Հօր հրաժարագիրը, այն նկատումներով թէ հսկանակ իր ճիգերուն կարող չէ եղած պաշտօնական յարաբերութիւններով թաղման հայ ժողովուրդին անեմականական պահանջներէ զոհացում տալ թաղման հայ ժողովուրդին: Թէ ամէն կուսակցութեան վեր մնալով հանդերձ, անկարող եղած է մեր ազգային ներքին կեանքը փնտրող ընդհանուր ուժերն հրախնդ հայտն եւ համեմատելի գործակցութեան, և թէ՛ վերջապէս՝ Ազգ. իշխանութիւնը իր բարոյական դերին յարձուրդեալը մեզ ընդունած ըրարու միասնութիւնը օգտակար արդիւնք մը չէ ունեցած ինքնին: Ժողովը այս հրաժարագիրը որոշեց անցընել յաջորդ նիստի օրակարգին: Յետոյ կարգացուեցաւ Վարչութեան հրաժարագիրը, որուն մէջ կ'ըսէ թէ «Յաւով կը տեսնէ որ դառն փորձեր կը փորձուին ստէյլ ազգին բարոյական ուժը ջլատելու, ... յարձակումներ կը գործուին Ազգ. և Վարչ. Ժողովներու անդամներու դէմ՝ իրենց պաշտօնի կիրառութեանը միջոցին, ուսանողութեան մէջ անկարգապահութեան ոգին կը քայքայելու, սահմանադրական ընտրութեանց ատեն ընտրողական Ժողովներու դէմ ճնշումներ կը գործադրուին, զաւառներու մէջ առաջնորդներու և տեղական վարչութեանց դէմ բռնական արարքներ տեղի կ'ունենան, ... և վերջապէս նոյն ծայրայեղութիւնը՝ սխալ ըմբռնուած ազատութեան և օրինաւորութեան անուանով, ինչ որ պատճառ կը դառնայ ընդհ. լքում՝ յառաջ բերելու:» ... Հետեւապէս Ազգ. Վարչութիւնը չկարենալով ստանձնել այսպիսի վիճակի մը պատասխանատուութիւնը, հարկ կը համարի մատուցանել իր հրաժարականը, Ազգ. Ժողովոյ հեղինակութեան և իմաստութեան թողլով անօրինելի դարմանն այս վիճակին:

Այս հրաժարագրէն ետքը կարգացուեցաւ նաեւ Տ. Բ. Սեղբոսեան Էֆ. Ի. ընդարձակ և խնամեալ մէկ ուսումնասիրութիւնը՝ հրաժարագրին մէջ յիշուած արարքներուն վրայ: Ատոր մէջ կը յիշուէին թէ եկեղեցիները բանալու կամ գոցելու խնդրոյն առթիւ փոքրամասնութիւնը ի՞նչ ապօրէն միջոցներ ի գործ դրած էր, արհամարհելով Ազգ. իշխանութիւնը, և գործը հասցնելով մինչև Իզմիրի եղևնագործութիւնը, թէ ի՞նչպէս Շ. Գարահիսարի եկեղեցւոյ տանիքը և զանգակատունը բանալով բանալստութիւն եղած էր եկեղեցւոյ մէջ, Տրապիզոն թատերական ներկայացում տրուած էր եկեղեցւոյ մէջ, եկեղեցիներէ մէկը բանալով գոցուած էր Ժողովուրդին առջև, Մալազկերտի մէջ կուսակցական մը ժողովըրդեան թէ՛ չոգեւոր և թէ վարչական ներկայացուցիչն եղած է, թէ գաւառներէ կը գրուի որ արտասահմանէն եկողները նախ կը յարձակակին եկեղեցւոյ և վարժարանի վրայ, և թէ վերջապէս ի՞նչպէս մատուցուած ուսանողաց միտքը կը խանգարուի:

Վարչութեան ատենապետին այս խնամեալ ուսումնասիրութեանէն ետքը, մանրամասն ու ճշգրիտ պատկեր մը օրուան ազգ. տագնապալից վիճակին, Դաւիթ Էֆ. Տ. Մովսէսեան հարցուց թէ Վարչութիւնն առանց ի դարման ի՞նչ միջոցներ գործադրած է, Հայկ. Էֆ. Խօճասարեան պատասխանեց թէ Վարչութիւնն այդ պայքարներու միջոցին յամբողջ բարոյական հեղինակութիւնն ի գործ դրած է. սակայն երբ իր միջոցներն սպառած են և օրինական միջոցի դիմելու պէտք ներկայացած, ու Վարչութիւնն այդ միջոցին դիմել որոշած է, Ս. Պատրիարքն անվերապահ կերպով իր ուրոյն տեսութիւնը պարզած է թէ ինք բարոյական հայր է բայց ոչ զօրապետ, ու չի կրնար դիմել կառավարութեան:

Յետոյ սկսան բանախօսութիւնները՝ ընդդէմ և ի նպաստ Ազգ. Վարչութեան հետեւած ուղղութեան: Դէմ խօսեցան Հմ.

Արամանց և Գր. Զօհրապ էֆ. ներք՝ պերճախօս բայց երկար ճառերով, որով կը պահանջէին անպայման Վարչութեան հրաժարականին ընդունուիլը։ Ասոնց պատասխանեցին Դաւիթ Տ. Մովսէսեան և Վահան Թէքէեան էֆ. ներք, պաշտպանելով Վարչութիւնն և պահանջելով մերժում անոր հրաժարականին։ Տաճարի անձուկ էջերը թողլաւու չին մանրամասնօրէն մէջ բերել թերու դէմ խօսուածները, որ ծանօթ են օրաթերթերու ընթերցողներուն։ Կարեւորն այն է որ այդ օրը վիճաբանութիւնք չաւարտեցան, և ժողովը վերջացաւ այն ուրուամբ որ Վարչութիւնը շարունակէ իր նիստերը առ այժմ։ Սակայն այդ որոշումը չէ գործադրուած դժբախտաբար։ Վարչութեան երկու ժողովները նիստ չգումարեցին այս շաբթու ալ, և Ս. Պատրիարքը Հօկտ. 22էն ի վեր կատարած մակագրութիւնները կը ստորագրէ «հրաժարեալ Պատրիարք Կ. Պոլսոյ»։

Անխնայութիւնը կը շարունակուի ուրեմն. այսօր ազգային պաշտօնական մարմին մը չկայ որուն կարելի ըլլայ դիմել, ժողովրդեան ցաւերուն դարման գտնելու համար։

* Ազգ. ժողովոյ անցեալ Ուրբաթի նիստին մէջ ու է անախօսք միջադէպ չպատահեցաւ, և Վարչութեան թերու դէմ խօսողներ կրցան իրենց կարծիքը պարզել համարձակօրէն։ Ատիկա կարելի եղաւ շնորհիւ ժողովին դռնփակ հանգամանքին. հակառակ պարագային հուանական էր կրկնութիւնը Մարտ 26ի նիստին տխուր դէպքերուն, ինչ որ կը հաստատուի եկեղեցւոյ չըջափակէն դուրս՝ փողոցը հաւաքուող բազմութեան անհանդարտ և սպառնալից երեւոյթէն, որ դժբախտաբար առիթ տուաւ ոստիկանական միջամտութեան, որուն ցրուելու համար ըրած կրկնակի յորդորներն երբ ապարդիւն մնացին, հրամանատարն օժանդակ ոստիկաններու միջոցաւ քանի ցրուեց զիրենք, և յամառաբար անաստողները ձերբակալեց։ (*)

(*) Դռնօթեամբ կառքացիմք քերթերու մէջ քի մերթախալեալներն արձակուած են, ի հատկին կանչուելու պայմանով։

Երեւակայե՛լ թէ ի՞նչ պիտի ըլլար ժողովին վիճակը, եթէ դռնքաց ըլլար նիստը, և իր որոշումը որքան անկաշկանդ պիտի կրնար նկատուիլ ահաբեկիչ խուժանի մը բուռն միջոցներու սպառնալիքին առկա։

Տխու՛ր, յուսահատական բարքեր։

ՔէլէկեՍԱՆ ԽԱՆԻ ՆՈՐ ՆՈՒԷՐԸ. — Դահլիշի Լուսաբեր-Արեւին մէջ գոհութեամբ կը կարգանք թէ Տիգրան խան Քէլէկեան իմանալով թէ Զորք Մարզումնի մէջ իր անունով կառուցանելի որսանոցին համար նախապէս նուիրած 1000 ոսկին պիտի չսաւէ, նոյն նպատակով 500 ոսկի ևս նուիրելու պատրաստակամութիւն յայտնած է Հայոց բարեգործական Ընդհ. Միութեան Կեդր. ժողովին։ Այս առատաձեռն նուիրատուութիւնը երախտագիտութեամբ կը համակէ Միութեան համակիրները, ինչպէս նաեւ Կիլիկիան տարաբախտ որբերը։

ՌՈՒՄԱՆԻՈՅ ՀԱՅԵՐԸ. — Տ. Դանիէլ Արքեպիսկ. Յակոբեան, որ ուումանիոյ ճամբով անցեալ շաբթու մայրաքաղաքս ժամանեց էջմիածնէն և շաբթուս ճամբայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ, Ս. Պատրիարք հօր հետ տեսակցութեան մը միջոցին յայտնած է Ռումանահայ գաղութին բաղձանքը՝ որ Պոլսոյ Պատրիարքարանն ուշադրութիւն դարձնէ իրենց վրայ և առաջնորդ մը կամ աջակց հովիւ մը զրկէ, զոր պատուաւորապէս ապրեցնելու լայն միջոցներ կան. Պուքրէշի եկեղեցին տարեկան 1,500 ֆրանս ոսկիի հասոյթ ունի, ասոր անոր ձեռքը մնացածներէն զատ։ Քէօսթէնճէի մէջ տարեկան 700 ֆրանս. ոսկիի ծախք մը գիւրութեամբ կը հայթայթուի տեղւոյն 200 տնւոր պատուական հայ գաղութէն։ Ժամանակ է որ Պատրիարքարանը լուրջ ուշադրութիւն դարձնէ այսքան օրինաւոր և ստիպողական խնդրանքի մը վրայ։

ՏՐԱՊԻԶՈՆԻ առաջնորդ ընտրուած է Դաւառ. ժողովոյ անդամոց միաձայնութեամբ՝ Դեր. Տ. Տրդատ Եպիսկ. Պալեան։ Իսկ նոյն քաղաքի ազգ. երեսփոխան՝ ծանօթ գրագէտ Օննիկ էֆ. Զիֆթէ Սարաֆ։

ԲԱԼՈՒԻ Վիճակին ևս առաջնորդ ընտրուած է տեղապահ Տ. Եղնիկ Ծ. Վ. Գուլփաղճեան :

ՆՈՐԱՊԱՍԿ Տ. Դանիէլ Արքեպ. Յակոբեանէ զատ, Տ. Տ. Զաւէն, Մկրտիչ և Կարապետ Եպիփաները ևս անցեալ շաբթու Պոլիս ժամանեցին : Տ. Զաւէն Եպսկ. ժամանակ մը պիտի մնայ Կ. Պոլիս, Մակարայեցոց վանքի ռեփականութեան տարիներէ ի վեր առկախ ինդիրը կարգադրելու համար : Տ. Թորգոմ Եպիսկ. Սամսոնի ճամբով գացած է ուղղակի Սեբաստիա, և ձեռք առած է վիճակային գործերու ղեկը :

ԽԱՐԲԵՐԴԻ առաջն. տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վ. Ալանեան շաբթուս Պոլիս հասաւ, և Ս. Պատրիարք հօր այցելելով՝ տեղեկութիւն հաղորդեց Խարբերդի ազգ. անցքերուն վրայ : Յուռաջիկային՝ Վարչութեան անդեկագիր մը պիտի ստայ այն պատճառներուն վրայ որ անհամաձայնութիւն առաջ բերին իր և կուսակալին միջև :

ԿՈՄԻՏԱՍ Վ.Ի ԱՌԱՋԻՆ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Անցեալ կիր. օր Բերայի արհեստանոցի մէկ բաժնին մէջ մեծանուն երաժշտագէտ Տ. Կոմիտաս Վ., սակաւաթիւ բայց իր կարողութիւնը և արժանիքը գնահատող ընտրեալ բազմութեան մը ներկայութեանը կատարեց իր առաջին հրապարակաստութիւնը՝ հայ զեղջիկական երաժշտութեան վրայ : Իր խղճամիտ ուսումնասիրութեանց վրայ հիմնուած՝ հաստատեց թէ այդ երաժշտութիւնը հաւաքական ստեղծագործումն է գեղջկական համայնքներու : Ասոր զխաւոր առիթներն են վանքերու ուխտագնացութիւնները, և այդ առիթը կատարուած պարերն և ուրախութիւնները. որոն միջոցին երգեցիկ երիտասարդներ կը հաւաքուին քաջ երգիչի մը շուրջը, որուն գրեթէ մէկ պարզ խօսքը՝ կրկնակի (նազարար) մը թորդուած՝ զանազան ձայնաստիճաններով և ելեւէջներով արտաբերուելով կը կազմուի եղանակ մը ամբողջ : Նաև, ու մասնաւորապէս, աշխատութեան միջոցին զիւղացին իր շուրջի առարկաներէն կը քաղէ

երգի նիւթը : Աշխատանքի երգին մէջ գըլխաւոր ձայններն առնուած են գոմէշին բառաշէն և ստորին սնիւլին ճոխնչէն : Կեանքի ուրիշ գործողութեանց համար ալ երգեր յօրինուած են, օրօրներու, հարսանեաց են : Խօսելէ ետքը այն օրէնքներուն վրայ, որով կազմուած է գեղջուկ երաժշտութիւնը, հմուտ բանախօսը ի վեր հանեց թէ բնականից ազգեր ազդած են սովորաբար անոր վրայ, և շատ անգամ միեւնոյն երգին եղանակները պարական նահանգներուն մէջ այդ տեղի դրոշմը կը կրին ու քրդական եւ թրքական գաւառներու մէջ ալ տեղական ազգեցեցութեան ենթարկուած են՝ զխաւորապէս առնական բերաններու մէջ, մինչ կիներու քով պահպանուած է անոնց հայեցի դրոշմը : Բանախօսն եղբակացոց թէ պէտք է արհամարհել հայ գեղջուկ երաժշտութիւնը, ընդհակառակն պէտք է օգտուիլ անկէ, և իրաց վանել մանաւանդ թոյլ և մեղկ երաժշտութիւնը որ այնքան յուր ներգործութիւն մը կ'ընէ :

Տ. Կոմիտաս իր խօսքերուն իբր փաստ մէջ կը բերէր երգերու հատուածներ : Խորունկ տալանորութիւն գործեցին իր խօսքերը ունկնդիրներուն վրայ, հաւաստիքը տալով իր խղճամիտ պրպտումներուն ու ուսումնասիրութեանց և անվիճելի արժանիքին :

Փափաքելի էր որ աւելի ժողովրդական և լայն շրջանակի մէջ խօսելու առիթը ունենար, արուեստին աչրը և գնահատութիւնը մայնելու համար անվարժ և սովորամոլ ուղեղներու մէջ :

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՐԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷԲՍԷԻԴՅԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐԲԱՅԻ ՔԶՆՅ. ԿԷՋԻԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Զախմաճըքար, Յակոբեան խան

THE
JOURNAL
OF
THE
AMERICAN
MEDICAL
ASSOCIATION
PUBLISHED WEEKLY
CHICAGO, ILL., U.S.A.
1914


Subscription price, \$5.00 per annum in advance.
Single copies, 15 cents.
Entered as second-class matter, June 26, 1911.
Postpaid.
Acceptance for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917.
Paid for postage by addressee.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill.
Entered as second-class matter, June 26, 1911.
Postpaid.
Acceptance for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917.
Paid for postage by addressee.

THE
JOURNAL
OF
THE
AMERICAN
MEDICAL
ASSOCIATION
PUBLISHED WEEKLY
CHICAGO, ILL., U.S.A.
1914

Subscription price, \$5.00 per annum in advance.
Single copies, 15 cents.
Entered as second-class matter, June 26, 1911.
Postpaid.
Acceptance for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917.
Paid for postage by addressee.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago, Ill.
Entered as second-class matter, June 26, 1911.
Postpaid.
Acceptance for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917.
Paid for postage by addressee.



ՍՏՁՅՈՒԱՍԾ ԳԻՐՔԵՐ

ԿԻՒՐԻՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎՐԱՅ, Պատմութիւն Հայ վրական յարաբերութեանց, է. դարու մէջ: Պատմական ուսումնասիրութիւն Հայոց եկեղեց. պատմութենէն քառասնամեայ շրջանի մը (574-610) վրայ: Գրեց Վիեննայի Միթարեան միաբանութենէն Հ. Ներսէս Ակիմեան: Տպ. Վիեննա 1910: Աւելի քան 300 էջերէ բաղկացած հատոր մը, ուր կ'ուսումնասիրուին Վրաց Հայոցմէ բաժանման պարագաները, որոնց մէջ մեծ դեր ունեցած է Կիւրիոնի գործունէութիւնը, և որոնք սերտիւ կապուած են Հայոց կաթողիկոսութեան 574-610 շրջանի պատմութեան հետ: Այս գործը՝ արդիւնք մանրակրկիտ ուսումնասիրութեան մը և պրպտումներու, արժանի է հայ բանասէրներու և եկեղեցական պատմութեամբ հետաքրքրուողներու լուրջ ուշադրութեան: Գին 5 ֆրանք:

ՍԵՒ ԷՁԸ, գրեց Հ. Մկրտիչ Պոստեան: Տպ. Վենետիկ, 1910: Սրտառուչ պատմութեանքներ հայ ժամանակակից արիւնոտ կեանքէն: Գին 1 ֆրանք:

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ, կազմեց Սահակ Բ. Յովնաննիսեանց, կրօնուսոյց Ստավրոբոլի, Աղեքսանդրայի և Օլգայի կիմնադիրներ և Հայոց ծխական ուսումնարանի: Տպ. Թիֆլիզ, հայրապետական թոյլտուութեամբ: Կը պարունակէ՝ Ա. մաս աղօթքներ՝ իրենց աշխարհաբար թարգմանութեամբ, և Բ. մաս՝ գլխաւոր տօներու համառօտ պատմութիւնները: Գին 20 կոպէկ:

ԿՐՕՆ, երկրորդ բաժանմունքի աշակերտների համար: Նահապետներու կեանքէն պատմութեանքներ: Գրեց Ս. Քամաշեանց, դպիր: Տպ. Թիֆլիզ, 1910: Գին 20 կոպէկ:

Ներսէս Բ. Կարապետեանց, միաբան Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ, ստացանք երեք հատորիկներ՝ ժողովրդական քարոզներ, խօսուած Բագուի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցին մէջ: Ա. — ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՆ, որ պսակուած է Իզմիրեանց Սահակ-Մեսրոպեան մրցանակով, և առաջին տպագրութիւն մը ունեցած է Պոլս, «Ի հաշիւ Սահակ-Մեսրոպեան ուսումնական մասնաժողովին», և Բ. տպ. Թիֆլիզ, Բ. — ՀԱՅԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ, և Գ. — ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, խօսուած Բագուի Մայր եկեղեցին մէջ 1909 Սեպտ. 13ին, յաւուր օծման Ն. Վեհափառութեան Տ. Տ. Մատթէոս Բ. ի, սրբազնակատար Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Կրօնքի և ազգի սիրոյն ջերմ զգացումներով օծուած գիրքեր, որոնց հաւատացեալներէն վերձանումը պիտի կրնար չլինիչ դեր մը ունենալ հոգիներու վրայ: Գին իւրաքանչիւրին 10 կոպէկ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

(Վկայեալ Կայսերական բժշկական վարժարանէն) Պեշկապ, Հայոց եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակուայի և լինտերու ամէն տեսակ հիւանդութիւններ. կը չինէ բնականին յար և նման ակուաններ փառջութի կամ ոսկի փլափի վրայ: Չափէն աւելի փտած ակուանները ֆուոսնէ կ'ընէ. կը չինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ քոռարչեմէ:

Հիւանդ կ'ընդունի Դ. և Ուր. օրերը առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր իր կողման ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ատկէ դուրս մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի: